



Հաղորդակցություն հանրային
առողջության ոլորտի
արտակարգ իրավիճակներում.
ուղեցույց ՋԼՄ-ների համար



BBC

MEDIA ACTION

TRANSFORMING LIVES THROUGH MEDIA
AROUND THE WORLD

Հեղինակներ՝

Ջենեվիվ Հաչինսոն և Ժակլին Դոլթոն

Դիզայներ՝

Լանս Բեկերս

Թարգմանիչ՝

Ֆենյա Եփրեմյան

Շապիկի լուսանկար .

Նկարահանող խումբը
հարցազրույց է վարում
կորոնավիրուսային
հիվանդության համավարակի
ժամանակ:

Լուսանկարը՝ Ֆաբրիս Քոֆրինի

/ AFP / Getty Images

Բովանդակություն

1 Ներածություն	4
2 Ինչպես կարող են լրատվամիջոցները փոխել իրավիճակը.....	5
3 Որոնք են հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակները	6
4 Ինչպես փրկել կյանքեր . հաղորդակցության ուղեցույցներ	14
5 Լրացուցիչ տեղեկության աղբյուրներ	30



1 Ներածություն

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակը բնութագրվում է զանգվածային՝ այսինքն, հարյուրավոր, հազարավոր կամ երբեմն միլիոնավոր հիվանդացության և մահացության դեպքերով:

Առողջապահական այդպիսի ճգնաժամի ընթացքում մամուլն ունի կյանքեր փրկելու կարողություն:

Արդյունավետ հաղորդակցությունը կարող է կանխել կամ նվազեցնել հիվանդության տարածումը և վարակակիրներին ուղղորդել դեպի առողջապահական ծառայություններ և բուժում:

Մույն ուղեցույցը մամուլի աշխատողներին ուղղված խորհուրդներ է պարունակում այն մասին, թե ինչպես օգնել լսարանին առողջական ոլորտի արտակարգ իրավիճակների ժամանակ:

Այն կարելի է ընթերցել «BBC Media Action»-ի [ձեռնարկի](#) հետ միասին (հասանելի է առցանց), որն ավելի ընդհանրական ուղղություն է ցույց տալիս այն մասին, թե ինչպես հաղորդակցվել հումանիտար աղետներից տուժած մարդկանց հետ՝ նպատակ ունենալով փրկել կյանքեր և կրճատել դժվարությունները:¹

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակները կարող են առաջանալ շատ արագ կամ դանդաղ: **Մույն ձեռնարկը կանդադադառնա հանրային առողջության ոլորտի համեմատաբար արագ ի հայտ եկող արտակարգ իրավիճակներին:**

Նկարում

Ռադիոխմբագիրն ու ձայնային ռեժիսորը աշխատում են կորոնավիրուսային համավարակի ժամանակ Իտալիայի տեղական ռադիոկայաններից մեկի ուղիղ եթերում:

Լուսանկարը՝ Իվան Ռոմանո / Getty Images

¹ BBC Media Action (2013), *Ծրագրերի կազմում ճգնաժամներից տուժած մարդկանց համար*՝ <https://www.bbc.co.uk/mediaaction/publications-and-resources/brochures/lifeline-programming>

2 Ինչպես կարող են լրատվամիջոցները փոխել իրավիճակը

Առողջության ոլորտի արտակարգ իրավիճակում հաղորդակցության լավ և ճիշտ իրականացումը կարող է որոշիչ դեր խաղալ տուժածների համար. արդյոք կտուժեն տասնյակ կամ հարյուրավոր մարդիկ, թե՞ հազարավոր կամ միլիոնավոր:

Մամուլը կարող է արագ հասնել մարդկանց՝ կապ ստեղծելով քաղաքացիների, փորձագետների և արտակարգ իրավիճակում գործող ծառայությունների միջև:

Այն կարող է մարդկանց տրամադրել կարևոր տեղեկություններ վստահելի աղբյուրներից՝ նպատակ ունենալով իրազեկել կատարվող իրադարձությունների մասին, թե ինչպես պաշտպանվել և երբ ու ինչպես դիմել բժշկական օգնության և աջակցության: Այն կարող է նվազեցնել առողջապահական ոլորտի աշխատակիցների կամ համայնքային պատասխանատուների կողմից լրացուցիչ ճամփորդելու և հանրային առողջությանն առնչվող արտակարգ իրավիճակների մասին իրազեկելու անհրաժեշտությունը, հատկապես այնպիսի իրավիճակներում, երբ մարդկանց մեկուսացնելու անհրաժեշտություն լինի՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով:

Արտակարգ իրավիճակի ազդեցության նվազեցումը հանգեցնում է առողջապահական ծառայությունների գերծանրաբեռնվածության նվազեցմանը, ինչի արդյունքում հնարավոր է դառնում փրկել ավելի մեծ թվով կյանքեր:

Արտակարգ իրավիճակներում ճշգրիտ և վստահելի տեղեկատվության պակասը կարող է պատճառ դառնալ ասեկոսների և ապատեղեկատվության առաջացման համար, ինչը իր հերթին կարող է բերել խուճապի, քաոսի, դնել մարդկանց ավելի մեծ ռիսկի տակ և/կամ վարակված անձանց նկատմամբ խարանային վերաբերմունքի: Այս ամենը կարող է նպաստել հիվանդության տարածման արդյունքում էլ ավելի մեծ թվով մարդկանց վարակմանը կամ մահացությանը: Լրատվական կազմակերպությունները կարող են օգնել լրացնելու տեղեկատվական բացերը և հակազդել ոչ ճիշտ տեղեկատվությանը:

Փաստեր կան նաև, որ մամուլը հանրային առողջության ոլորտի ճգնաժամերի ընթացքում կարող է կարևոր դեր խաղալ մարդկանց հանգստացնելու և մոտիվացնելու, որ իրենք իրավիճակի բարելավմանն ուղղված քայլեր ձեռնարկեն:²

² BBC Media Action (2015).

Արտակարգ իրավիճակներում հումանիտար տեղեկատվության տարածում <https://www.bbc.co.uk/mediaaction/publications-and-resources/research/reports/Humanitarian-broadcasting-in-emergencies-synthesis-report-2015>

3 Որոնք են հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակները

Հանրային առողջությանն առնչվող ճգնաժամը կամ արտակարգ իրավիճակը բնութագրվում է առողջության հետ կապված մի իրադարձությամբ, որը ունակ է մեծ թվով մարդկանց կամ բնակչության զգալի տոկոսի մոտ առաջացնել վատ ինքնագգացողություն կամ հիվանդություն, հաշմանդամություն և/կամ նույնիսկ մահ:³

Եթե առողջության ոլորտի արտակարգ իրավիճակը դառնում է չափազանց լուրջ, ապա այս կամ այն երկրի կառավարությունը կարող է հայտարարել արտակարգ դրություն, որի ընթացքում հնարավոր է դառնում փոխել պետական գործակալությունների գործառնությունները՝ որպեսզի նրանք կարողանան ավելի արդյունավետ արձագանքել ստեղծված իրավիճակին:⁴

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակը կարող է առաջանալ շատ արագ, ինչպես օրինակ խոլերայի բռնկումը փախստականների ճամբարում հումանիտար աղետի ժամանակ, սակայն այն կարող է նաև զարգանալ շատ դանդաղ, ինչպես օրինակ մաևդկանց գիրացման աճը շատ երկրներում: Ինչպես նշվել է ներածության մեջ, սույն ձեռնարկը վերաբերում է արագ առաջացող հանրային առողջության ոլորտի ճգնաժամերին կամ արտակարգ իրավիճակներին:

Հիվանդությունների մեծամասշտաբ բռնկումները կարող են գերծանրաբեռնել առողջապահական ծառայությունները և խաթարել կյանքի նորմալ ընթացքը. կարող է ընդհանրապես հնարավոր չլինի իրականացել սովորական բուժում: Այսօրվա միջազգային ճամփորդության լայն տարածվածությունը նշանակում է նաև, որ եթե չկազմակերպվեն լավ համակարգված և ժամանակին իրականացվող արձագանքման պատշաճ գործողություններ, ապա հիվանդության բռնկումը կամ համաճարակը կարող է արագորեն վերածվել համավարակի (պանդեմիայի):

Հանրային առողջության արտակարգ իրավիճակների հանգեցման հավանականություն ունեցող հիվանդությունների օրինակները ներառում են .

³ ԱՀԿ (2017), *Արտակարգ իրավիճակներում արձագանքման շրջանակ*, <http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/258604/9789241512299-eng.pdf;jsessionid=2C902589AC35344B0A22D5C5868C976E?sequence=1>

⁴ ԱՀԿ (թվական չկա), *սահմանումներ*, *արտակարգ իրավիճակներ*, <https://www.who.int/hac/about/definitions/en/>

- **Խուլերան** առողջապահական ռիսկ է համարվում հատկապես հումանիտար ճգնաժամների ժամանակ: 2010թ. -ի երկրաշարժից 10 ամիս հետո Հաիթիում բռնկված համաճարակը 22 ամսվա ընթացքում հանգեցրեց խուլերայի 600,000 դեպքի և 7,436 մահվան: Գերբնակեցումը, վատ սնունդը, մաքուր ջրի պակասը, սանիտարական ենթակառուցվածքների բացակայությունը, գերծանրաբեռնված առողջապահական ծառայությունները և աղքատությունը դարձել էին Հաիթիում խուլերայի արագ տարածման գլխավոր պատճառները. Նշենք, որ դրանք շատ դեպքերում հաճախ են հանդիպում այս հիվանդության բռնկումների դեպքերում:⁵

⁵ Թոմսո, Դ. (2018), *Առողջությունը հումանիտար ճգնաժամներում. առողջության և առողջապահության սկզբունքներ և փորձ, Քենդրիջի համալսարան*

⁶ ԱՀԳ (2018), *Գրիպ (ինֆլուենցա)*, <http://www.who.int/influenza/en/>

- **Գրիպը (ինֆլուենցա)** սովորաբար սեզոնային հիվանդություն է, սակայն կան մտահոգություններ, որ կանխարգելման և բուժման պատշաճ գործողությունների պակասը կարող է մի քանի տարվա ընթացքում հանգեցնել գրիպի համավարակի և միլիոնավոր մահերի:⁶ Իմունային առավել թույլ համակարգեր ունեցող մարդիկ՝ հղի կանայք, տարեցները և հինգ տարեկանից ցածր երեխաները, գտնվում են ռիսկային գոտում: Հիվանդացության բարձր մակարդակը կարող է գերծանրաբեռնել առողջապահական ծառայությունները և ընտանիքներին ու համայնքներին ստիպել, որ իրենք, վարակվելու ռիսկի ենթարկվելով, խնամեն իրենց հիվանդներին: Մարդկանց վրա ամիսներով կամ տարիներով ազդող հիվանդության բռնկումները կարող են զգալի ազդեցություն ունենալ նաև այլ ոլորտների վրա, քանի որ մարդիկ այլևս ի վիճակի չեն լինում գնալ աշխատանքի կամ դպրոց հաճախել, որովհետև հիվանդ են կամ ստիպված են խնամել հիվանդներին, կամ պարզապես փորձում են խուսափել վարակվելուց:
- **Պատվաստումների միջոցով կանխարգելման ենթակա** հիվանդությունների՝ կարմրուկի, դեղին տենդի կամ պոլիոմիելիտի բռնկումները տեղի են ունենում պատվաստումների մասին ապատեղեկատվության, պատվաստման ծառայությունները խաթարող տարբեր հումանիտար իրավիճակների, ինչպես նաև պատվաստման սահմանափակ հնարավորություններ ունեցող տարածքների միջև մարդկանց զանգվածային տեղաշարժի արդյունքում: Այս բռնկումներն ունեն հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակների վերածվելու ներուժ, թեթև չընդարձակվի պատվաստումների մակարդակը: Սույն ուղեցույցի ստեղծման պահին (2018թ. -ի ավարտ) Նիգերիայում, Աֆղանստանում և Պակիստանում շարունակվում էին պոլիոմիելիտի բռնկումները. հիվանդությունը վերջերս նաև գրանցվել է այնպիսի երկրներում, որտեղ պոլիոմիելիտը նախկինում իսպառ արմատախիլ էր արվել (Մոմալի և Սիրիա): Եվրոպայում կարմրուկի բռնկումները նույնպես ապատեղեկատվության արդյունքում ոչ բավարար չափով իրականացվող պատվաստումների արդյունք են:

- 2014–2016թթ. **Էբոլա վիրուսի** բռնկումը արևմտյան Աֆրիկայում արագորեն տարածվեց Սիերա Լեոնեում, Լիբերիայիում և Գվինեայում՝ հանգեցնելով հազարավոր մահերի: Թեպետ համաճարակի հիմնական կենտրոններն այս երեք երկրներն էին, միջազգային ճամփորդության արդյունքում մի քանի դեպքեր գրանցվեցին նաև այլ երկրներում, այդ թվում՝ Մալիում և Նիգերիայում: Բացի ուղղակիորեն Էբոլայի պատճառով գրանցված մահերից, Սիերա Լեոնեում, Լիբերիայում և Գվինեայում մահեր գրանցվեցին նաև, երբ պարզվեց, որ համաճարագի պատճառով առողջապահական ծառայությունները անհասանելի էին այլ հիվանդությունների համար: Առողջապահական ծառայությունների գերծանրաբեռնվածության, անհասանելիության կամ բազմաթիվ այլ պատճառաբանություններով մարդիկ խուսափեցին դրանցից օգտվելուց: Էբոլայի արագ տարածումը կապված էր տարբեր

գործոնների հետ, այդ թվում՝ վիրուսի բնույթը և թաղումներ անցկացնելու ավանդույթները: Դրանց արդյունքում մարդիկ շփվում էին Էբոլայով վարակված անձանց հետ: Պատճառներից էին նաև ապատեղեկատվությունը, որի պատճառով մարդիկ վարակակիրների հետ շփումը վաղ շրջանում չէին դադարեցնում, գերբնակեցվածությունը որոշ վայրերում, ինչպես նաև վարակված անձանց ճամփորդությունները:

Մահմանումներ

Վատառողջություն – ցանկացած վիճակ, որը հանգեցնում է վատ ինքնազգացողության: Մա ներառում է նաև հիվանդություններ, խանգարումներ և այլ վիճակներ:

Վարակ – վատառողջության պատճառ, որը կարող է մեկ անձից փոխանցվել մյուսին. վիրուսներ, բակտերիաներ և պարազիտներ:

Հիվանդություն – ախտանիշների համակցություն, որը ստիպում է մարմնի տարբեր մասերին նորմալ չգործել: Հիվանդությունները կարող են առաջանել վարակի, գենետիկ ժառանգության, կենսակերպի կամ շրջակա միջավայրի ազդեցության արդյունքում:

Բռնկում – երբ որևէ համայնքում, տարածաշրջանում կամ տարվա եղանակի ընթացքում հիվանդությունից տուժում են սովորականից շատ ավելի մեծ թվով մարդիկ: Բռնկումը կարող է տևել օրեր, շաբաթներ կամ տարիներ:

Համաճարակ – երբ վարակիչ հիվանդությամբ կարճ ժամանակահատվածում վարակվում են մեծ թվով մարդիկ՝ տարածվելով մեկ կամ ավելի համայնքներում կամ երկրներում:

Համավարակ (պանդեմիա) – համաշխարհային մասշտաբի կամ շատ ընդարձակ տարածաշրջան ընդգրկող համաճարակ, որը տարածվելիս հատում է երկրների սահմանները և սովորաբար ազդում մեծաթիվ մարդկանց վրա:

Պատվաստումների միջոցով կանխարգելման ենթակա հիվանդություններ – հիվանդություններ, որոնք հնարավոր է կանխել համապատասխան պատվաստման միջոցով:

Իմունային համակարգ – մարդու մարմնի համակարգը, որը պայքարում է հիվանդությունների դեմ:

Ովքեր են ամենաշատը ռիսկի ենթակա հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակներում

Հնարավոր է, որ բոլորը ենթակա լինեն հիվանդանալու ռիսկի, սակայն ոմանք ունեն վատառողջ դառնալու կամ «անբավարար առողջական վերջնարդյունքներ» (մահ կամ երկարաժամկետ խնդիրներ) գրանցելու առավել բարձր ռիսկայնություն, քանի որ.

- Վարքագիծն է նրանց ենթարկում ռիսկի (բուժաշխատողներ կամ հիվանդներին խնամող ընտանիքի անդամներ)
- Նրանց իմունային համակարգերն ամբողջապես զարգացած չեն (մինչև հինգ տարեկան երեխաներ) կամ թուլացած են՝ կապված այլ վիճակներ հետ (հղի կանայք, անձինք, որոնք արդեն ունեն իմունային համակարգի վրա ազդող առողջական խնդիրներ, տարեցներ)
- Նրանք ի վիճակի չեն լքել բարձր ռիսկայնության գոտիները (շարժունակության կամ ծանր հոգեկան խնդիրներ ունեցող անձինք)
- Խոցելիությունը պայմանավորված է նրանց սեռական դերով (աղջիկներ և կանայք, որոնք ավելի հավանական է, որ կխնամեն հիվանդությունից տուժածներին՝ իրենց ենթարկելով վարակման բարձր ռիսկի):

Հետևյալ աղյուսակում ցուցադրվում են մարդկանց այն խմբերը, որոնք հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակում կարող են ենթարկվել որևէ վնասի կամ վատառողջության ռիսկի, ինչպես նաև այն ուղիները, որոնց միջոցով նրանք ենթարկվում են նշված ռիսկերին: Սա սպառիչ ցանկ չէ, և ամենառիսկային խմբերը կարող են փոփոխվել՝ կապված հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակի պատճառից: Հնարավորինս շուտ խոսե՛ք արտակարգ իրավիճակներում արձագանքման ծառայությունների հետ՝ նպատակ ունենալով բացահայտել, թե ովքեր են ամենախոցելի և ամենառիսկային խմբերը, քանի որ նրանք են լինելու այն հիմնական խմբերը, որոնց փորձելու էք աջակցել:

Ուսկային գտում գտնվող մարդկանց օրինակներ	Ինչու են նրանք գտնվում ռիսկային գտում
• Բուժաշխատողներ • Թափոններ և մարմնական հեղուկներ մաքրող անձինք • Դիերի հետ առնչվող մարդիկ • Այլ մարդկանց խնամող անձինք	Հիվանդ և/կամ ամենավարակիչ շրջանում գտնվող մարդկանց հետ շփվելիս նրանք նույնպես ենթարկվում են հիվանդանալու վտանգի: Բուժաշխատողները երբեմն նաև թիրախավորվում են զինված կոնֆլիկտների ժամանակ և հումանիտար իրավիճակներում նրանք հաճախ աշխատում են ամենավտանգավոր միջավայրերում:
• Իմունային համակարգը թուլացնող առողջական խնդիրներ ունեցող անձինք • Տարեցներ • Հղի կանայք • Երեխաներ, առաջին հերթին մինչև հինգ տարեկան երեխաներ և մասնավորապես նորածիններ	Թույլ իմունային համակարգ ունեցող անձինք ավելի քիչ են ունակ պայքարելու վարակների և հիվանդությունների դեմ: Որոշ իրավիճակներում կողմնակի առողջական խնդիրների կանխարգելման, կառավարման և բուժման ծառայությունների պակասը նշանակում է, որ հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակներում այս մարդկանց վատառողջ լինելու և մահանալու հավանականությունն ավելի բարձր է: Թերսնուցումը նույնպես ռիսկ է այս խմբերի, ինչպես նաև երեխաների, հղի կանանց և այն մարդկանց համար, որոնք առողջական խնդիրների պատճառով ունեն առավել սննդաբար ուտելիքի կարիք: Բացի այդ, անձինք, մասնավորապես երեխաները, որոնք հաճախ են ունենում լուծի դեպքեր, նույնպես կարող են լինել թերսնված և ունենալ թույլ իմունային համակարգեր:
• Երեխաներ • Տարեցներ • Հաշմանդամություն ունեցող անձինք • Հոգեկան խնդիրներ ունեցող անձինք • Կանայք	Այս խմբերը կարող են ունենալ բազմաթիվ լրացուցիչ մարտահրավերներ, ներառյալ առողջապահական և այլ ծառայությունների հասանելիությունը, իրենց խնամքի հարցը, առողջության ոլորտի արտակարգ իրավիճակի ազդեցության տարածքը լքելու կարողությունը և այլն:
• Չափազանց վտանգավոր պայմաններում գտնվող մարդիկ, ինչպես օրինակ հումանիտար արտակարգ իրավիճակներից տուժող անձինք	Տե՛ս ստորև. հիվանդություններ և վատառողջություն հումանիտար ճգնաժամերի ընթացքում:

Հիվանդություններ եւ վատառողջություն հումանիտար ճգնաժամերի ընթացքում

Հումանիտար ճգնաժամերի ընթացքում կարող է լինել հիվանդությունների և վատառողջության բարձր ռիսկայնություն, քանի որ հնարավոր է վնասված լինեն համապատասխան ենթակառուցվածքները, ինչպես նաև այն պատճառով, որ մարդիկ հաճախ կուտակվում են պատշաճ սանիտարական պայմաններ չունեցող վայրերում: Կացարանի, սննդի, մաքուր ջրի, առողջապահական ծառայությունների, ընտանեկան և համայնքային աջակցության հասանելիությունը կարող է էականորեն խաթարվել: Բոլոր այս գործոնները կարող են զգալիորեն ազդել առողջության վրա՝ մեծացնելով հիվանդությունների բռնկումների հավանականությունն ու ազդեցությունը:

Ստորև ներկայացվում են հումանիտար համատեքստում հիվանդություններին և վատառողջությանը նպաստող մի քանի առանցքային գործոններ:

- **Մուտքում.** ուտելիքի բավարար չափի և սննդարարության հասանելիության պակասը հանգեցնում է ցածր սնուցման (թերսնուցման տեսակ), որից առաջինն են տուժում նորածիններն ու փոքր երեխաները: Սննդային անբավարարությունները, ինչպիսիք են սակավարյունությունը, հյուսվածությունն ու թերաճը, օգտագործվում են ցածր սնվածությունը չափելու համար: Ցածր սնուցումն ու սննդային անբավարարությունները թուլացնում են նաև իմունային համակարգը, ինչը նշանակում է, որ մարմինն ի վիճակի չէ սովորականի պես պայքարելու վարակի և հիվանդության դեմ: Մա իր հերթին նշանակում է, որ ցածր սնուցում ստացող անձն ավելի հավանական է, որ կհիվանդանա և մահացության ավելի բարձր ռիսկայնություն կունենա այնպիսի վարակների արդյունքում, ինչպիսիք են խոլերան, լուծով ուղեկցվող հիվանդությունները, գրիպը կամ թոքաբորբը: Մանկահասակ երեխաների կրծքով կերակրումը կարևոր է թերսնուցման ազդեցությունը կրճատելու հարցում, հատկապես մինչև վեց ամսական երեխաների մոտ: Մակայն որպեսզի սա արդյունավետ լինի, անհրաժեշտ է, որպեսզի մայրը ստանա բավարար սնունդ. եթե մայրն ունի ցածր սնուցվածություն, ապա կրծքով կերակրվող երեխան նույնպես կլինի անբավարար սնված:
- **Ջուր.** հումանիտար ճգնաժամի արդյունքում հնարավոր է, որ ավերված լինեն ջրային և սանիտարական համակարգերը, կամ մարդիկ հայտնվեն ժամանակավոր ճամբարներում և կացարաններում, որոնք չունեն պատշաճ ջրային ենթակառուցվածքներ: Երկու դեպքում էլ մաքուր ջրի, օձառի և մաքրող նյութերի հասանելիությունը կարող է լինել սահմանափակ կամ ընդհանրապես բացակայի: Սանիտարական համակարգերը, ինչպիսիք են առանձնացված աղբավայրերը, կոյուղային ու ջրահեռացման համակարգերը, հնարավոր է որոշակի ժամանակ հասանելի չլինեն, առողջապահական ծառայությունները սկզբնական շրջանում կարող են ընդհանրապես բացակայել, իսկ դեղորայքի հասանելիությունը լինի շատ սահմանափակ: Խոլերայի բռնկումները ռիսկ են հանդիսանում վատ հիգիենայի և սանիտարական պայմանների դեպքում և գերբնակեցվածության պարագայում:



- **Վարակիչ հիվանդություններ.** խիտ բնակեցված և մաքուր ջուր ու պատշաճ սանիտարական պայմաններ չունեցող, ինչպես նաև պատվաստվածության ցածր մակարդակ ունեցող ժամանակավոր կացարանները վարակիչ հիվանդությունների արագ տարածման աղբյուր կարող են հանդիսանալ: Այդ թվում՝ լուծ առաջացնող հիվանդություններ (ներառյալ՝ խոլերա), պատվաստումների միջոցով կանխարգելվող հիվանդություններ (պոլիոմիելիտ և կարմրուկ) և գրիպ: Կարող են նաև լինել մեծ թվով անձինք, որոնք կտուժեն միջատների կամ կենդանիների միջոցով փոխանցվող հիվանդություններից, ինչպիսիք են մալարիան կամ դանգո տենդը, քանի որ ջրահեռացման բացակայությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում մոծակների բազմացման համար:
- **Մեռական և վերականգնողական առողջություն.** կախված հումանիտար ճգնաժամից՝ սեռական և վերականգնողական առողջությամբ զբաղվող ծառայությունները կարող են հասանելի չլինել: Սա նշանակում է՝ ընտանիքի պլանավորման մեթոդների, հակաբեղմնավորիչ պարագաների, մայրական և նորածնային խնամքի, վերականգնողական առողջությանն առնչվող հիվանդությունների կառավարման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման անհասանելիություն:

Նկարում

Պաշտպանիչ դիմակով տղամարդն անցնում է կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարելուն նվիրված պատատի մոտով:

Մերգեյ Սուպինսկի / AFP / Getty Images

- **Մանկական առողջություն.** առողջապահական ծառայությունների խաթարումը նշանակում է, որ խաթարվելու են նաև երեխաների առողջության մշտադիտարկումը, ծնողներին տրամադրվող աջակցությունը և երեխաների պատվաստումը: Իմունային համակարգը շարունակում է զարգանալ մինչև երեխայի հինգ տարին լրանալը: Սա նշանակում է, որ մինչև հինգ տարեկան երեխաները հիվանդանում են ավելի արագ, իսկ ցածր սնուցման արդյունքում գրանցվող հիվանդությունների բռնկման պարագայում մեծ է նրանց մահանալու հավանականությունը:
- **Բռնություն.** հումանիտար ճգնաժամի ժամանակ սովորաբար աճում է ընտանեկան բռնության մակարդակը. ամենաշատը տուժում են կանայք և երեխաները: Աճում են հատկապես կանանց և աղջիկների նկատմամբ սեռական ոտնձգության և բռնաբարության դեպքերը, միաժամանակ՝ շատ քիչ հնարավորություն է լինում վնասվածքների բուժման, էմոցիոնալ և հոգեկան աջակցության, իսկ հանցանքը կատարողին դատական պատասխանատվության ենթարկելու համար:
- **Հոգեկան առողջություն.** հոգեկան առողջության հետ կապված համատարած խնդիրներ կարող են առաջանալ հումանիտար ճգնաժամի ընթացքում տրավմա տանելու կամ տրավմատիկ դեպքի ակնատես լինելու արդյունքում: Չքավորության, աշխատանքի կորստի, մեկուսացման և սոցիալական մերժվածության հանգեցրած ամենաօրյա սթրեսը կարող է վտանգել մարդկանց հոգեկան առողջությունը: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄ), դեպրեսիան, ընկճախտը և հոգեակտիվ նյութերի չարաշահումը հոգեկան առողջության տարածված խնդիրներն են այս համատեքստում:
- **Վնասվածքներ. դրանք** կախված են հումանիտար ճգնաժամի տեսակից: Խորը կտրվածքները, այրվածքները, կոտրվածքները, ջրախեղ լինելը, հրազենային վնասվածքները, ծեծը և ներքին արյունահոսությունը, դանակահարությունները, վերջույթների կորուստը և այլ վիճակները պահանջում են անհապաղ առաջին օգնություն և կարող են նաև պահանջել ծավալուն և բարդ վիրահատություն: Շատերը չգիտեն, թե ինչպես վարվել, երբ ինչ-որ մեկը վնասվածք է ստացել. մարդիկ չգիտեն որոնք են այն քայլերը, որոնք անհապաղ պետք է ձեռնարկվեն կամ թե ինչպես ստանալ հասանելի օգնություն և համապատասխան խնամք:
- **Քրոնիկական առողջական վիճակներ և հաշմանդամություն.** չիդխանցվող հիվանդություններով, քրոնիկական առողջական խնդիրներով կամ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ընթացիկ դեղորայքային կարիքներ, որոնք կարող են և չբավարարվել հումանիտար ճգնաժամների ընթացքում: Սա նշանակում է, որ շաքարախտ, քաղցկեղ, ՄԻԱՎ, արթրիտ, շարժական խնդիրներ, էպիլեպսիա, կուրություն, համրություն կամ դեմենցիայի հետ կապված հիվանդություններ ունեցող մարդիկ բացի սննդից, մաքուր ջրից, կացարանից և տարրական առողջապահական խնամքից ունեն նաև լրացուցիչ կենսական կարիքներ:



4 Ինչպես փրկել կյանքեր հաղորդակցության ուղեցույց

Մույն գլխում ուրվագծվում են այն քայլերը, որոնք դուք, որպես լրագրող, խմբագիր կամ հաղորդավար, կարող եք կատարել նպատակ ունենալով լավագույնս աջակցել ձեր լսարանին հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակի ժամանակ:

Եղեք պատրաստված

Առավելագույնս արդյունավետ լինելու համար մամուլի արձագանքը հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակում պետք է լինի արագ:

Լավ նախապատրաստությունը նպաստում է արագ արձագանքմանը: Մկնեք կապեր ստեղծել արտակարգ իրավիճակներում այն արձագանքման ծառայությունների, առողջապահական կազմակերպությունների և փորձագետների հետ, որոնք լավ հաղորդակցվողներ են: Այս հարաբերությունների ստեղծումը կարող է նպաստել, որպեսզի լրատվամիջոցները դառնան արտակարգ իրավիճակում արձագանքման մաս, ինչն ավելի կհեշտացնի սույն ուղեցույցում նշված մյուս քայլերի ձեռնարկումը: Որոշ տեղերում Կարմիր խաչի նման կազմակերպությունները կարող են ստանձնել տեղական համայնքների հետ նախապատրաստության աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ հիվանդություններին հետևելու համակարգերի հիմնումը և բռնկումների ընթացքում գործողությունների պլանի պատրաստումը: Այս կազմակերպությունների հետ քննարկեք, թե ինչպես կարող եք լավագույնս աջակցել նրանց աշխատանքին:

Նկարում

Լրագրողը նկարահանում է բուժքրոջը ինտենսիվ թերապիայի կորոնավիրուսային հիվանդների պալատում:

Լուսանկարը՝ Ալբերտո Պիցոլի / AFP / Getty Images

Տեղեկատվության հավանական աղբյուրներ

- **Առողջապահական հարցերում մասնագիտացած կազմակերպություններ.**
«Բժիշկներ առանց սահմանի» (MSF), Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), ՅՈՒՆԻՄԵԾ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ), տվյալ երկրի առողջապահության նախարարություն, հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (ՀՎԿԿ)
- **Տեղական եւ միջազգային հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ).**
Տեղական ՀԿ-ներ և Կարմիր խաչի/Կարմիր մահիկի շարժումը
- **Համայնքի անդամներ.** հոգևոր, համայնքային, երիտասարդական առաջնորդներ, արհմիությունների ղեկավարներ և այլն
- **Առաջին զոնում աշխատողներ.** այդ թվում՝ բուժաշխատողներ, սոցիալական աշխատողներ, ոստիկանություն և երբեմն՝ ռազմական անձնակազմ

Հանրային առողջության ոլորտի լուրջ արտակարգ իրավիճակի ժամանակ ReliefWeb.int և humanitarianresponse.info կայքերը կարող են պարունակել օգտակար կոնսուլտներ և տեղեկություններ:

Կատարեք ուսումնասիրություններ

Կարևոր է, որ լրագրողներն իմանան տվյալ առողջապահական արտակարգ իրավիճակի մասին հիմնական տեղեկությունները, կապված դրա կանխարգելման, փոխանցման և բուժման հետ, սակայն լրագրողներն այնուամենայնիվ փորձագետներ չեն: Բացահայտեք այն աղբյուրները, որոնք կարող են տրամադրել ճշգրիտ տեղեկություններ և ձեզ ավելի իրազեկ դարձնել թեմային:

Սահմանեք նպատակներ

Առողջապահական արտակարգ իրավիճակների ժամանակ ձեր լսարանին կարող եք օգնել շատ տարբեր եղանակներով: Եթե հստակ գիտեք, թե ինչի եք ուզում հասնել ձեր հաղորդման միջոցով, ապա առավել հավանական է, որ ձեր նյութը առավել հաջողված կլինի: Հետևյալ ցանկն ուրվագծում է մի քանի քայլ, որոնք կարող են արդյունավետ կերպով իրականացվել հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակների ժամանակ:

Օգնել լսարանին պահպանել առողջությունը հետևյալ քայլերի միջոցով.

- Տրամադրել ճշգրիտ տեղեկություններ այն մասին, թե ինչ է կատարվում և որն է ձգնաժամի պատճառը:
- Բացատրել գործող արտակարգ միջոցառումները և թե ինչպես ստանալ օգնություն
- Տեղեկացնել, թե ինչպես կանխել հիվանդության տարածումը և ինչ անել, եթե որոշ մարդիկ ձեր լսարանից կամ նրանց ընտանիքի անդամներն ունեն ակտանիշներ

Մարտահրավերներին դիմակայելու նպատակով լսարանին քաջալերել

- տարածելով հիվանդությանը դիմակայելու և առողջանալու հետ առնչվող դրական պատմություններ
- տուժածների փորձի փոխանակում իրականացնելով, որպեսզի իրենք դրանից դասեր քաղեն
- եթերում պատմելով դիմակայելու մարտավարությունների մասին և հարցեր տալով առողջապահական ոլորտի փորձագետներին, արտակարգ իրավիճակներին արձագանքող ծառայությունների ներկայացուցիչներին կամ քաղաքական ղեկավարներին
- վստահելի անհատների հրավիրելով եթեր՝ ոգևորող և ուղղորդող տեղեկություններ տրամադրելու համար

Նվազեցնել արդեն վարակված մարդկանց նկատմամբ խարանային վերաբերմունքը՝ լսարանին օգնելով.

- հավատալ առողջապահական փաստերին և չլինել սնահավատ, հաղթահարել տաբուները
- կարեկցանք ցուցաբերել իրավիճակից տուժած անձանց նկատմամբ և գիտակցել, թե նրանք ինչի միջով են անցնում
- լինել մոտիվացված տուժածներին օգնելու համար՝ առանց առաջացնելու լրացուցիչ ռիսկեր կամ վնասներ

Հակազդել առողջական ճգնաժամի շուրջ վտանգավոր ասեկոսներին և թյուրըմբռումներին.

- մատուցելով վստահելի աղբյուրներից ստացված և հաստատված փաստեր
- բացահայտելով և ուղղելով թյուրընկալումներն ու ապատեղեկատվությունը
- լսարանին կոչ անելով հարցեր ուղղել հիվանդության կամ արտակարգ իրավիճակի մասին և նրանց հարցերը փոխանցելով վստահելի փորձագետներին
- կառավարելով ակնկալիքներն առ այն, թե ինչն է հնարավոր, ինչը ոչ՝ նպատակ ունենալով կանխել հնարավոր զայրույթը կամ հուսահատությունը:

Օգնել առողջապահական և աջակցության ծառայությունները համայնքներին հասանելի դարձնելու գործում

- ուշադրություն հրավիրելով համայնքների կամ խնդիրների վրա, որտեղ կարիքները չեն բավարարվում (և պատասխանատուներին հնարավորություն տալով արձագանքել և լուծել խնդիրները)

Օգտակար տեղեկությունների օրինակներ

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակում մարդիկ ամենաշատը ցանկանում են լսել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ է կատարվում
- Ինչու՞
- Որտե՞ղ
- Ո՞վ է ռիսկի ենթակա
- Որո՞նք են վտանգները
- Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել ինքս ինձ ու իմ համայնքը
- Ի՞նչ անել, երբ վարակվել է ծանոթներիցս մեկը
- Ինչպիսի՞ օգնություն և բուժում է հասանելի, որտե՞ղ և ինչպե՞ս օգտվել դրանից
- Արդյո՞ք անվտանգ է առողջապահական կենտրոնն այցելելը
- Կա՞ թեժ գիծ և եթե այո, ապա ո՞րն է դրա համարը
- Ի՞նչ կազմակերպություններ են օգնություն տրամադրում (նկարագրեք կամ ցույց տվեք նրանց լոգոները, օգնեք ճանաչել նրանց և նրանց մատուցած ծառայությունները)
- Ինչպե՞ս գգել աղբը
- Ի՞նչ է լինելու առողջացողների հետ
- Արդյո՞ք առողջացողները կարող են վարակել ինձ և իմ ընտանիքին
- Արդյոք լինելու՞ է պատվաստանյութ մեզ պաշտպանելու նպատակով
- Ո՞վ է խնամելու այն երեխաներին, որոնք կորցրել են իրենց ընտանիքները
- Ինչքա՞ն է շարունակվելու արտակարգ իրավիճակը
- Կարո՞ղ ենք վերադառնալ մեր նախկին վարքին, թե՞ պետք է շարունակենք հետևել կանխարգելման միջոցառումներին
- Արդյոք լինելու՞ է նման մեկ այլ բռնկում կամ առողջապահական արտակարգ իրավիճակ: Եթե այո, ապա ինչպե՞ս այն կանխել
- Ե՞րբ է անվտանգ լինելու ճամփորդելը կամ շուկա/դպրոց/աշխատավայր վերադառնալը
- Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ

Համակարգեր

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակում առողջապահական ծառայությունները և լրագրողները պետք է աշխատեն միասին՝ նպատակ ունենալով ստեղծելու հաղորդակցության համակարգ, որն ապահովում է տեղեկությունների հոսք՝ ժամանակին մատուցվող, հստակ և կայուն: Կապ պահեք մամուլի այլ ներկայացուցիչների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ինչպես նաև պետական պաշտոնյաների հետ՝ պարզելու, թե ինչ է տեղի ունենում, ինչպես նաև արտակարգ իրավիճակից տուժած անձանց համար օգտակար տեղեկություններ քաղելու նպատակով: Եթե առկա են հաղորդակցության համակարգման մեխանիզմներ, ապա փորձեք օգտվել նաև դրանցից՝ ռեսուրսները մաքսիմալ արդյունավետ օգտագործելու և շփոթությունն ու ջանքերի կրկնությունը նվազեցնելու նպատակով:

Մատուցեք գործնական, իրականացման ենթակա տեղեկատվություն

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակներում տրամադրվող լուսաբանումը հաճախ կենտրոնանում է իրավիճակի ընդհանրական դիտարկման (ինչպիսին է, օրինակ, իրավիճակի մասշտաբայնությունը կամ գրանցված մահերի թիվը) և բացասական տեղեկությունների վրա (այդ թվում՝ մարդկային տառապանքի և կառավարության ու արձագանքման ծառայությունների ձախողումների վրա): Մակայն ճգնաժամում տուժածներին կամ ռիսկի ենթակա մարդկանց նախևառաջ անհրաժեշտ է «տեղեկատվություն, որը նրանք կարող են օգտագործել»:

Ձեր եթերում ներառեք գործնական տեղեկություններ, որոնք մարդիկ կարող են կիրառել իրենց դրությունը բարելավելու նպատակով: Իսկ դա կօգնի հասկանալ, թե ինչ անել, երբ մեկը հիվանդանում է: Նշեք նաև տեղեկություններ և աջակցություն ստանալու հիմնական աղբյուրները: Անպայման հաղորդեք այնպիսի տեղակատվություն, որը տուժածների **համար է և ոչ ընդամենը նրանց մասին:**

▶ ՏԻՊԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Վստահելի դեմքեր

2012թ. -ին Սոմալիում պոլիոմիելիտի բռնկման ժամանակ «BBC Media Action»-ի թիմն իր ռադիո ծրագրում ներգրավեց հարգված բանաստեղծների, ինչպես նաև պատվաստողների և բուժաշխատողների, որոնց օգնությամբ փորձ արեց լսարանին օգնելու կայացնել իրագրված որոշումներ՝ կապված պոլիոմիելիտի և պատվաստումների հետ: Բանաստեղծները տարբեր բանաստեղծություններ գրեցին և կարդացին, որտեղ ներառված էին տեղեկություններ պոլիոմիելիտի և պատվաստումների մասին, բուժաշխատողները բացատրեցին առկա փաստերը, իսկ պատվաստողները պատմեցին, թե ինչու էին ընտրել այդ մասնագիտությունը՝ այդպիսով վստահություն ստեղծելով համայնքներ այցելելուց առաջ:

Կարդացե՛ք ավելին .
<https://www.bbc.co.uk/mediaaction/where-we-work/africa/somalia/polio-vaccination>

Օգտագործեք վստահելի դեմքեր

Մարդիկ միայն հետևում են տեղեկությանն ու ուղղորդմանը, եթե վստահում են դրանց, իսկ տեղեկությանը վստահելն ու հավատալը կախված է նրանից, թե ում միջոցով է այն մատուցվում: Չափազանց կարևոր է, որպեսզի ձեր ծրագրում ներգրավվեք այնպիսի մարդկանց («դեմքերի»), որոնք վայելում են ձեր լսարանի վստահությունը: Կախված համայնքից և համատեքստից՝ սա կարող է ներառել հայտնի անհատների, համայնքային առաջնորդների, բուժաշխատողների և «ինձ պես» մարդկանց՝ նրանց, որոնց հետ լսարանը կարող է իրեն նույնացնել. դրանք սովորաբար այն մարդիկ են, որոնք իրենց առողջությունը պաշտպանելու նպատակով կիրառել են ճիշտ ցուցումներ և ձեռնարկել են ճիշտ քայլեր կամ բուժօգնություն են ստացել բժշկական հաստատությունից:

Անձնական պատմություններ

Հանրային առողջության ոլորտի արտակարգ իրավիճակից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տուժածների անձնական պատմությունները կարող են հզոր ազդեցություն ունենալ ճնշածամի ընթացքում մարդկանց փորձառությունն ու զգացումները հասկանալի ու «նորմալ» դարձնելու առումով, մարդկանց օգնելու զգալ, որ նրանց օգնում են և իրենք մենակ չեն, կարեկցանք ստեղծելով միմյանց նկատմամբ: Անձնական պատմություններն օգնում են մարդկանց գիտակցել, որ նրանք միայնակ չեն ճգնաժամը դիմագրավում և որ մյուսները նույնպես արձագանքել և զգացել են նույն կերպ: Անձնական պատմությունները կարող են նաև լսարանին ցույց տալ, թե ինչպես են իրենց նման մարդիկ հաղթահարել դժվարությունները և որդեգրել նոր վարքագիծ: Ներգրավվեք մարդկանց թիրախավորվող համայնքից: Նրանք կարող են լինել տանը խնամք ապահովողներ կամ խոցելի մարդիկ՝ տարեցներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք:

Շփվեք

Լսարանի հետ շփումը չափազանց կարևոր է հեռուստառադիոծրագրերի արդյունավետության համար: Ծրագիրը հետաքրքիր և աշխույժ դարձնելուց բացի այն ունի մարդկանց միավորող նշանակություն և առողջապահական արտակարգ իրավիճակի մասին տեղեկացված լինելուց զատ օգնում է մարդկանց անցնել կանխարգելիչ գործողությունների իրականացմանը:

Լսարանի հետ շփումը.

- Մարդկանց տալիս է իրենց կարիքները, հարցերն ու մտահոգություններն արտահայտելու հարթակ
- Մտեղծում է միասնականության մթնոլորտ
- Հգորացնում է հանրության՝ մամուլի հետ համագործակցելու մթնոլորտը
- Օգնում է հասկանալ արտակարգ իրավիճակում արձագանքման բացերը և հաշվետու է պահում իշխանություններին
- Օգնում է բացահայտել և ուղղել ապատեղեկատվությունը
- Նպաստում է փորձագետների և քաղաքացիների միջև տեղեկությունների փոխանցմանը
- Օգնում է մարդկանց կիսվել գիտելիքներով և քաղված դասերով, ինչը նրանց ուղղորդում է ճիշտ գործողություններ կատարելու առումով
- Վերացնում է խարանային վերաբերմունքը՝ նորմալացնելով մարդկանց վերաբերմունքը առողջական վիճակների նկատմամբ, ըմբռնում և կարեկցանք ստեղծելու միջոցով
- Մարդկայնացնում է ձեր նյութերը և ավելի գրավիչ է դարձնում դրաց քննարկման առարկան
- Հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել ձեր լսարանը, և ձեր տեղեկատվությունն ու բովանդակությունը հարմարեցնել նրան:

Շփումը լսարանի հետ

Մտածեք այն մասին, թե ինչպես կարող եք օգտագործել Ձեր հնարավորությունները՝ լսարանի հետ երկխոսություն կազմակերպելու և լսարանի անդամների ներգրավվածությունն ապահովելու համար: Ահա որոշ գաղափարներ.

- Զանգ ընդունող հաղորդումներ (օր.՝ հարցուպատասխան փորձագետի հետ՝ առողջապահական իրավիճակի մասին)
- Հարցուպատասխանի հաղորդումներ փորձագետների հետ սոցիալական մեդիայում (օր.՝ Ֆեյսբուք)
- Վիկտորինաներ, որոնց կարող են մասնակցել կարճ հաղորդագրությունների (SMS-ների) կամ զանգերի միջոցով
- Լսարանից մեկը պատմում է իր անձնական պատմությունը*
- Կարճ հարցուպատասխան* (վոքս փոփ)
- Քննարկումներ մեծ լսարանում*
- Հարցազրույցներ լսարանի անդամների հետ*

*** Մի՛ հավաքեք մարդկանց մեկ տեղում կամ հարցազրույցներ ու «վոքս փոփեր» անցկացրեք անձամբ, եթե ճգնաժամն առնչվում է վարակիչ հիվանդության հետ եւ կա անվտանգության ռիսկ:** Փոխարենը հարցազրույցներն ու այլ միջոցառումներն իրականացրեք հեռախոսով կամ ինտերնետային գործիքների միջոցով ինչպիսիք են «Skype»-ը կամ հաղորդագրություն ուղարկող հավելվածները: Նախքան վարակված մարդկանց անձամբ հանդիպելը խորհուրդ հարցրեք համապատասխան փորձագետներից:

Նաև հաշվի առեք.

- Հաղորդակցման ինչ միջոցներ (օր.՝ հեռախոսներ) ունի ձեր լսարանը, որը կօգնի նրանց մասնակցել ձեր ծրագրին: Արդյո՞ք բոլորն ունեն այս հնարավորությունը, թե՞ միայն ձեր լսարանի որոշակի մասը (օր.՝ ամենահարուստները):
- Արդյո՞ք ունեք բավականաչափ ռեսուրսներ լսարանի հետ շփման դեպքում արձագանքելու կամ այդ շփումը կառավարելու համար: Լսարանի հետ շփումը կարող է աշխատատար լինել, օրինակ, հեռախոսազանգերի պատասխանելուց կամ «վոքս փոփ» անցկացնելու նպատակով ճամփորդելը:
- Պաշտպանության ի՞նչ խնդիրներ պետք է հաշվի առնվեն (լսարանի անդամների տարիքն ու խոցելիությունը, անձնակազմի անվտանգությունը):
- Արդյո՞ք անհրաժեշտ է լինելու չբացահայտել ծրագրի մասնակիցների ինքնությունը:
- Կա՞րդյոք հնարավորություն հավաստիանալու, որ խոցելի խմբերը (օր.՝ տարեցներ, երեխաներ, կանայք և աղջիկներ, հաշմանդամություն ունեցող անձինք) կարող են մասնակցել կամ բավարար չափով ներկայացված լինել ձեր ծրագրում:

Հիշեք ամենախոցելի մարդկանց մասին

Հանրային առողջությանն առնչվող ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում ամենախոցելին լինում են այն մարդիկ, որոնք ունեն առողջական խնդիրների ռիսկ և որոնք ամենաքիչն են ունակ իրենք իրենց մասին հոգ տանելու: Ինչպես բացատրվեց 3-րդ գլխում, այս մարդկանց թվում կարող են լինել երեխաներ, տարեցներ, կանայք և աղջիկներ (հատկապես հղի կանայք), հաշմանդամություն ունեցող անձինք և առողջության և բարեկեցության հետ կապված խնդիրներ ունեցողները:

Ծրագիրը կազմելիս հաշվի առեք այս խմբերի յուրահատուկ կարիքները, որոնք հաճախ ավելի լայն են ու տարբերվում են ուրիշների կարիքներից: Փորձեք հասկանալ.

- Ի՞նչ կարիքներ ունեն նրանք:
- Ինչպե՞ս կարող եք դրանք բավարարվել:
- Ինչպիսի՞ աջակցության և պաշտպանության կարիք ունեն նրանք
- Ո՞վ է նրանց խնամում և ի՞նչ կարիքներ ունեն այդ խնամողները:

Հակազդեք ասեկոսներին

Ուղղակիորեն հակազդեք առողջական ճգնաժամի վերաբերյալ միֆերին և թյուրընկալումներին՝ խոսելով դրա պատճառների, փոխանցման, կանխարգելման, բուժման և վարակված մարդկանց նկատմամբ խարանային վերաբերմունքի մասին:

1 Բացահայտեք

Փնտրեք այն ասեկոսներն ու ոչ ճշգրիտ տեղեկատվությունը, որը կարող է արագորեն տարածվել բանավոր խոսքի միջոցով և նույնիսկ ավելի արագ սոցիալական մեդիայում:

▶ ՏՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Ինտերակտիվ ծրագիր

Արևմտյան Աֆրիկայում 2014-2016թթ. Էբոլայի բռնկման ընթացքում «BBC Media Action»-ի պատրաստած ծրագրերից մեկը հեռախոսազանգեր ընդունող ռադիո քննարկում էր, որտեղ հյուրերը առողջապահական ոլորտի փորձագետներ էին, և մարդիկ կարող էին զանգահարել և հարցնել հիվանդության, Էբոլան կանխարգելու նպատակով ավանդական վարվելակերպի փոփոխությունների և իրենց լսած ասեկոսների մասին: Մարդիկ հնարավորություն ունեին տալու այն հարցերը, որոնց համար պատասխաններ էին փնտրում, և հստակ պարզաբանումներ ստանալ տեղի ունեցողի և Էբոլա վիրուսի մասին և նաև այն մասին, թե ինչու էր անհրաժեշտ փոխել կամ վերացնել որոշակի ավանդական վարքագծեր:

Կարդա՛ ավելին՝

<https://www.bbc.co.uk/mediaaction/where-we-work/africa/sierra-leone/sierra-leone-ebola-response>

2 Ճշտեք

Երբ հանդիպում եք լայնորեն տարածվող ասեկոսների կամ կասկածելի տեղեկատվության, պարզեք, թե որքանով է այն ճշգրիտ:

3 Դիտարկեք

Մտածեք ասեկոսների հետևանքների մասին. արդյո՞ք այն կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս հասցնել:

4 Ուղղեք

Եթե լայն տարածում ունեցող ասեկոսն կարող է վնաս հասցնել, ապա պետք է դրան հակազդել ճշգրիտ տեղեկատվությամբ: Առկա միջերն ու թյուրընկալումները վերացնելու նպատակով սովորաբար ստիպված կլինեք անել ավելին, քան պարզապես նշելը, որ դրանք ոչ ճիշտ տեղեկություններ են: Համոզվեք, որ ունեք վստահելի աղբյուրներ, որոնք կարող են քննարկել և զգայուն ու հարգալից կերպով հստակորեն բացատրել փաստերը: Շփվեք ձեր լսարանի անդամների հետ և նրանց հրավիրեք հարցեր տալու՝ նպատակ ունենալով օգնել նրանց ըմբռնել և հասկանալ փաստերի էությունը և բացահայտել ապատեղեկատվությունը հետագայում:

Ասեկոսների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների մասին տե՛ս աղետներից տուժած համայնքների համար նախատեսված այս ձեռնարկը՝ <http://www.cdacnetwork.org/tools-and-resources/i/20170613105104-5v7pb>

▶ ՏԻՊԱՑԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ասեկոսներին հակազդելը

Վերջին տարիներին Աֆղանստանում պոլիոմիելիտի դեմ պայքարը խաթարվում է պոլիոմիելիտի դեմ պատվաստման մասին կեղծ տեղեկություններով: Եղել են պնդումներ այն մասին, որ պատվաստումը օրինական չէ, պատրաստված է կենդանու մեզից և որ այն վնասում է երեխաներին և հատկապես նրանց հետագա պտղաբերությանը: Բուժաշխատողներն ու իշխանությունները ուժերը մեկտեղել են տեղական մոլլաների և համայնքային առաջնորդների հետ՝ նպատակ ունենալով մարդկանց համոզել, որ պատվաստումներն անվտանգ են: Նրանք ազդեցիկ կրոնականներից ձեռք են բերել գրավոր և տեսանկարահանված ֆաթվաներ (կրոնական պարզաբանում)՝ օգնելու համոզել թերահավատ ծնողներին, որ պոլիոմիելիտի դեմ պատվաստումները թույլատրվում են իսլամի կողմից:

Կարդա՛՜ ավելին այստեղ՝

<https://www.irinnews.org/feature/2018/05/10/afghanistan-battles-polio-rumours-mistrust-and-negotiating-taliban>

Լավ հաղորդակցվեք

Որպեսզի ձեր հաղորդակցությունն ու ծրագիրը դառնան հնարավորինս մատչելի, կառուցողական և օգտակար, կարևոր է համոզվել, որ դրանք պետք է լինեն.

- **Հստակ.** պետք չէ օգտագործել հապավումներ, բարդ եզրույթներ (տերմիններ) և ժարգոն: Ձեր խոսքը պետք է լինի մատչելի և հասկանալի: Միշտ բացատրեք այն եզրույթներն ու արտահայտությունները, որոնք կարող են միանշանակ կամ հստակ չլինել լսարանի համար:
- **Ճշգրիտ. մատուցեք** ճիշտ տեղեկություններ: Տեղյակ եղեք ամենավերջին նորություններին: Մի՛ նպաստեք այն միջերի ու թյուրընկալումների տարածմանը, որոնք կարող են խոչընդոտել կանխարգելման գործողություններին: Եթե ձեր տեղեկությունն ընկալվի որպես ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական, ապա դուք կկորցնեք ձեր լսարանի վստահությունը և արդյունքում ավելի շատ վնաս կտաք, քան օգուտ: Փորձեք պատկերացնել այնպիսի մի իրավիճակի հետևանքները, երբ դուք հավաստիացնում եք մարդկանց, որ պատվաստանյութը հասանելի կլինի հաջորդ օրը, այն դեպքում, երբ այն դեռ փորձարկման փուլում է և մի քանի շաբաթ կամ ամիս հասանելի չի լինի: Եթե դուք փոխանցում եք սխալ տեղեկություններ, ապա ուղղեք այն հնարավորինս արագ և տեղեկացրեք այդ մասին համապատասխան մարմիններին, որպեսզի նրանք կարողանան հնարավորինս սահմանափակել անցանկալի հետևանքները:
- **Վստահելի.** եղեք վստահելի դեմք: Համոզվեք, որ ձեր տեղեկությունները ճշգրիտ են, ցույց տվեք, որ դուք մտախոզված եք ձեր լսարանի բարեկեցությամբ և փորձում եք նրանց օգնել: Աշխատեք համայնքի հեղինակավոր անդամների հետ կարևոր տեղեկությունները հաղորդելու հարցում: Մարդկային տառապանքի պատմություններից սենսացիաներ մի՛ սարքեք և մի՛ չարաշահեք դրանք:
- **Հետևողական.** համակարգեք ձեր աշխատանքը տեղական իշխանությունների, առաջին արձագանքման ծառայությունների հետ, համոզվելու, որ հակասական տեղեկություններ չեք տալիս մարդկանց: Եթե ձեր և իրենց ուղերձների մեջ կան անհամապատասխանություններ, պարզեք՝ ինչու և փորձեք ուղղել դրանք:
- **Լուծումներին միտված.** օգնեք լսարանին լուծումներ փնտրել իրենց առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար: Խոսեք հիվանդության կանխարգելմանն ու բուժմանը խոչընդոտող սահմանափակումների մասին և քննարկման առարկա դարձրեք հիվանդության ախտանիշներ ունեցող մարդկանց նկատմամբ խարանային վերաբերմունքը: Խոսեք մարդկանց վախերի մասին և փորձեք քննարկել հնարավոր լուծումներ, օրինակ, ինչով կարելի է փոխարինել վտանգավոր ավանդույթները:



- Իրատեսական.** Եթե որևէ համայնքում մարդիկ չունեն օժտակամ չեն կարող այն ձեռք բերել, ապա մի հորդորեք նրանց ձեռքերը լվանալ օժանոթով: Փորձեք պարզել, թե ինչ կարող են նրանք օգտագործել դրա փոխարեն (օր.՝ մոխիր) և առաջարկեք դա որպես տարբերակ: Որո՞նք են այն պարզ գործողությունները, որ կարող են մարդկանց տալ ճգնաժամը վերահսկելու զգացողությունը :
- Գործնական.** օգնեք համակարգել խնամքի պահանջարկը և արագ արձագանքման ծառայությունների մատչելիությունը: Պարզեք, թե ինչ ծառայություններ են հասանելի (թեժ գիծ, բուժման կենտրոններ, թեստավորման ծառայություններ) և հստակ ասեք, թե երբ և ինչպես մարդիկ կարող են կամ պետք է օգտվեն դրանցից: Օրինակ, մարդիկ կարող են օգտվել թեստավորման կենտրոններից միայն որոշակի ախտանիշներ ունենալուց կամ կոնկրետ ռիսկի ենթարկվելուց հետո: Կամ հնարավոր է, որ թեժ գիծը գործի միայն ցերեկային ժամերին:

Նկարում

Բուժքույրը ստուգում է սղամարդու ջերմությունը
 ԼՈՒՄԱՆԿԱՐԸ՝
 Կիրիլ Կուդրյավցև / AFP /
 Getty Images

- **Կարեկցող.** մարդամոտ դարձրեք ձեր նյութը: Փորձեք ըմբռնել մարդկանց զգացմունքները և պատմեք բուժաշխատողների, առողջության ոլորտի արտակարգ իրավիճակից տուժածների և առողջացածների անձնական պատմությունները: Վատառողջ լինելը տհաճ է և երբեմն ահաբեկող: Ապաքինված լինելն էլ կարող է սարսափեցնել՝ կապված խարանային վերաբերմունքի շուրջ վախերի և ընտանիքի ու համայնքի անդամների կողմից մերժված լինելու հետ: Նույնը վերաբերում է այն բուժաշխատողներին, որոնք հարձակման են ենթարկվել և նույնիսկ սպանվել հանրային առողջությանն առնչվող արտակարգ իրավիճակներում աշխատելիս: Մարդկանց հնարավորությունն տվեք խոսելու իրենց վախերի մասին:
- **Ներգրավող.** գրավեք ձեր լսարանի ուշադրությունը և հնարավորություն ընձեռեք մասնակցելու ծրագրի կազմմանը: Մարդիկ կարող են պարզապես հոգնել առողջական խնդրի մասին անընդհատ լսելուց հատկապես ռիսկի ենթակա վայրերում, որոնք, սակայն դեռ չեն տուժել: Գտեք նոր ուղիներ՝ մարդկանց համոզելու լսել և խոսել խնդիրների մասին՝ առանց դա անելու սենսացիաների կամ նրանց վախեցնելու միջոցով (տե՛ս տարբեր ձևաչափերի դիտարկումը ստորև):
- **Դրական.** փորձեք չլենտորոնանալ արտակարգ իրավիճակի բացասական կողմերի վրա: Վախ ու հիստերիա տարածելը շատ հեշտ է, և թեպետ վախն ու շոկը օգտագործող հաղորդակցության միջամտությունները կարող են հանգեցնել մարդկանց իրազեկվածության բարձրացմանը, դրանք կարող են նաև առաջացնել խարան և ժխտում և կանխել այն վարքագիծը, որը պահանջվում է առողջության ոլորտի արտակարգ իրավիճակը վերացնելու համար:

Փորձեք տարբեր ձևաչափեր

Մտածեք տեղեկատվությունը հաղորդելու տարբեր ուղիների և ձևաչափերի մասին: Կարճ գովազդային ֆորմատի նյութերը կարող են արդյունավետ լինել պարզ լուրեր հաղորդելուց. օրինակ, «սա այն համարն է, որին կարող եք զանգահարել, եթե ունեք հետևյալ ախտանիշները»: Որպես կարևոր ուղերձ փոխանցելու ժամանցային ձև կարող են ծառայել երգերը, որոնք կօգնեն մարդկանց հիշել ասելիքը:

Ավելի երկար սեզմենտներն օգնում են մարդկանց իմանալ, թե ինչ անել, ինչպես նաև հասկանալ, թե ինչու և ինչպես: Դրանք հույս են ներշնչում առավել բարդ, զգայուն կամ տաքու համարվող թեմաներին անդրադառնալիս: Հարցազրույցների, քննարկումների և սիթկոմների ձևաչափերը կարող են օգնել խնդրի մանրամասները ուսումնասիրելուն և «մարդկային վերաբերմունք» ստեղծել ճգնաժամից տուժածների կամ դրա դեմ պայքարողների համար:

Ճիշտ մարդկանց տվեք ճիշտ հարցեր

Մամուլի միջոցով լայն լսարանի հետ կապը հզոր գործիք է, որը կարող է լինել օգտակար կամ վնասարար: Մեր պատասխանատվության մեջ է մտնում համոզվելը, որ եթերն օգտագործվում է լավ նպատակներով: Լսարանի կարիքներին արձագանքելու համար շատ կարևոր է գրուցակիցների ճիշտ ընտրությունը: Ընտրեք գիտելիքներ ունեցող, հուսալի և թեմայի շուրջ արտահայտվելու կարողություն ունեցող մարդկանց: Որոշ դեպքերում բուժաշխատողը կամ հիվանդությունից այդ պահին առողջացողը կարող են ավելի արժեքավոր կամ տեղին գրուցակից լինել, քան բարձրաստիճան քաղաքական գործիչը: Տվեք այնպիսի հարցեր, որոնք կհանգեցնեն կոնկրետ խորհրդի կամ լուծումների և ոչ պարզապես ընդհանուր տեղեկությունների, որոնք մարդիկ չեն կարող օգտագործել:

Հարցազրույցի հարցերի օրինակներ

Գրիպի համաճարակի ժամանակ հարցազրույցի ընթացքում մասնագետներին տրվող հարցերը կարող են ներառել հետևյալը (արանք կարող են հարմարեցվել այլ առողջապահական արտակարգ իրավիճակներին)

- Ի՞նչ է գրիպը
- Ինչպե՞ս է այն տարածվում
- Ինչպե՞ս իմանալ՝ մարդը գրիպ ունի, թե՛ ոչ
- Ի՞նչ պետք է անել, երբ կարծում եք, որ դուք կամ ձեր ծանոթն ունի գրիպ
- Որտե՞ղ և ինչպե՞ս կարելի է ստանալ օգնություն, եթե կարծում եք, որ գրիպ ունեք
- Որքա՞ն է առողջանալու հավանականությունը գրիպով հիվանդանալու դեպքում
- Արդյո՞ք բուժում կա գրիպի համար
- Ինչպե՞ս կարող եմ կանխել գրիպի տարածումը
- Ինչպե՞ս կարող եմ օգնել գրիպով հիվանդին առողջանալ

Մի՛ վնասեք

Երբեմն հանրային առողջությանն առնչվող արտակարգ իրավիճակում օգնել փորձելիս մամուլը կարող է ակամայից ավելի շատ վնաս հասցնել: Բացի համոզվելուց, որ ձեր տրամադրած տեղեկատվությունը փաստական առումով ճիշտ է, պետք է նաև նկատի ունենաք ձեր հաղորդածի հետևանքները և թե ինչպես կարող է այն մեկնաբանվել:

Օրինակ, որոշ արտակարգ իրավիճակներում մարդկանց համար խմելու ջուրը կարող է հասանելի չլինել: Այդ դեպքում աջակցող կազմակերպությունները նրանց տրամադրում են քյորի հաբեր: Մարդկանց ասվում է՝ օգտագործել այս հաբերը՝ հիվանդությունից պաշտպանվելու նպատակով, սակայն եղել են դեպքեր, երբ մարդկանց չեն բացատրել, թե *ինչպես* օգտագործել այս հաբերը և դրանք ջրի մեջ լուծելու փոխարեն ոմանք կուլ են տվել դրանք՝ վտանգելով սեփական առողջությունը: Ոչ ամբողջական տեղեկությունն այս պարագայում ավելի շատ վնաս է տվել, քան օգուտ:

Հավաստիացեք, որ հասկանում եք, թե ինչպես տարբեր եզրույթները, արտահայտությունները կամ տեղեկությունը կարող են թյուրընկալվել կամ օգտագործվել մյուսների նկատմամբ խարանային վերաբերմունք ձևավորելու համար և փորձեք խուսափել դրանից: Օրինակ, «գոհ» բառի փոխարեն օգտագործեք «տուժած անձ» արտահայտությունը և խուսափեք մարդկանց հիվանդությունը «տարածելու» մեջ մեղադրելուց: Փոխարենն օգտագործեք հիվանդության «տարածում» կամ «փոխանցում» արտահայտությունները: Մի՛ կապեք մի կոնկրետ խումբ առողջապահական որևէ խնդրի պատճառի կամ տարածման հետ: Մարդիկ պետք է հասկանան, թե ինչպես կարող է հիվանդությունն ազդել և ովքեր ու ինչ թվով մարդիկ կարող են այդ հիվանդությունն ունենալ՝ առանց նրանց նկատմամբ ցուցաբերելու խարանային վերաբերմունք կամ առանց նրանց մեկուսացնելու:

Զգույշ եղեք, եթե ինչ-որ մեկը կամ նրա հարազատը տուժել է հիվանդությունից: Եթե նրանք բուժվում են լուրջ հիվանդությունից, ապա հնարավոր է, որ լինեն ֆիզիկապես և հոգեպես խոցելի, կամ կարող է պարզապես սգան հարազատի մահը: Հաջորդ էջում պատկերված են օգտակար ուղղորդող տեղեկություններ:

Հարցազրույցներ արտակարգ իրավիճակում տուժած մարդկանց հետ

Նախքան մարդկանց հետ ուղիղ կամ անուղղակի խոսելը

Եթե նախատեսում եք խոսել առողջապահության ոլորտի արտակարգ իրավիճակից անմիջականորեն տուժած անձի հետ, ռիսկի մի՝ ենթարկեք ինքներդ ձեզ կամ ուրիշներին: Նախ խորհուրդ հարցրեք պատկան մարմիններից և առողջապահական փորձագետներից՝ ձեր քայլի անվտանգության և պահանջվող պաշտպանիչ միջոցառումների մասին:

Հարցազրույցից առաջ պատրաստվեք, խորհրդակցելով աջակցող ծառայությունների աշխատակիցների հետ այն խնդիրների և մարտահրավերների մասին, որոնք ծառացած են ճգնաժամից տուժած մարդկանց առջև և փորձեք հասկանալ, թե ինչպես խոսել նրանց հետ հարցազրույցի ընթացքում:

Մինչև հարցազրույցը նախնական զրույց անցկացրեք ձեր զրուցակցի հետ՝ համոզվելու համար, որ նա տեղյակ է, թե ինչ հարցեր կարող են քննարկվել և պատրաստ է խոսել դրանց շուրջ:

Հարցազրույցի ընթացքում համոզվեք, որ ունեք ձեր զրուցակցի գիտակցված համաձայնությունը, որ նա գիտի, թե ինչու են նրանից հարցազրույց վերցնում և ինչպես է օգտագործվելու այդ հարցազրույցը: Հնարավոր է, որ նրանք ցանկանան, որ զրույցի ընթացքում ինչ-որ մեկը լինի իրենց կողքին որպես բարոյական աջակցություն:

Առողջապահության ոլորտի արտակարգ իրավիճակից տուժած անձի պահանջները միշտ ավելի կարևոր են, քան հարցազրույցը վարողի պահանջները: Եթե զրգում եք, որ ձեր զրուցակիցը հոգնել է, հուզվում է, կամ պարզապես ցանկանում է ավարտել երկխոսությունը, ապա հարգեք նրա ցանկությունը:

Եղեք հեռատես

Առողջապահության ոլորտի արտակարգ իրավիճակները ազդում են մեծ թվով մարդկանց առողջության վրա: Մարդկանց աշխատանքը, կրթությունը, առօրյա գործողությունները, սննդի և առողջական խնամքի հասանելիությունը կարող են մեծապես տուժել ճգնաժամից: Փորձեք ձեր ծրագրում քննարկել այդ խնդիրները:

Եթե առողջության ոլորտի արտակարգ իրավիճակը տեղի է ունենում հումանիտար ճգնաժամի ընթացքում, ապա բացի մարդկանց ունեցած բոլոր այլ խնդիրներից (օրինակ, ընտանիքի անդամների, տան, աշխատանքի կորուստ կամ տրավմատիկ փորձառություն) կարող են առաջանալ լուծումներ պահանջող բազմաթիվ առողջապահական խնդիրներ:

5 Լրացուցիչ տեղեկությունների աղբյուրներ

Առողջապահական հաղորդակցման կարողությունների համագործակցություն [The Health Communication Capacity Collaborative (HC3)]

https://healthcommcapacity.org/hc3-project-materials/?fwp_health_area=emergency-preparedness

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն [World Health Organization] Արտակարգ իրավիճակների մասին ռեսուրսներ. <http://www.who.int/emergencies/en/>

Արտակարգ իրավիճակներում հաղորդակցման ուղեցույցներ. <https://www.who.int/risk-communication/guidance/download/en/>

Բժիշկներ առանց սահմանի (ԲԱԱ) [Médecins Sans Frontières (MSF)]

<https://www.msf.org.uk/issues>

Հիվանդությունների վերահսկման կենտրոններ [Centers for Disease Control (CDC)]

<https://www.cdc.gov/>

«BBC Media Action»-ի ուղեցույցներ առողջապահության ոլորտի եւ այլ արտակարգ իրավիճակների վերաբերյալ հաղորդակցության շուրջ.

<https://www.bbcmmediaactionilearn.com/course/view.php?id=187>

<https://www.bbcmmediaactionilearn.com/course/view.php?id=138>

Արտակարգ իրավիճակներում հաղորդումների վերաբերյալ հետազոտական արդյունքներ

<https://www.bbc.co.uk/mediaaction/publications-andresources/research/reports/Humanitarian-broadcasting-in-emergencies-synthesis-report-2015>

Այս հրատարակությունը ստեղծվել է «BBC Media Action»-ի կողմից՝ Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի համար: Այն հնարավոր է դարձել Առողջապահության համաշխարհային բյուրոյի [Bureau for Global Health] և ԱՄՆ միջազգային զարգացման (ԱՄՆ ՄԶԳ) գործակալության շնորհիվ հետևյալ դրամաշնորհի շրջանակներում՝ PIO Grants GHA-G-00-08-00006 and AID-GH-IO-17-00002: Հայերեն թարգմանությունը հնարավոր դարձավ Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարության (Foreign and Commonwealth Office) աջակցությամբ:

Այստեղ տեղ գտած կարծիքները հեղինակին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ-ի, կամ Մեծ Բրիտանիայի Արտգործնախարարության տեսակետը:

©BBC Media Action 2018

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

Հեռ.՝ +44 (0) 20 7481 9797

Ֆաքս՝ +44 (0) 20 7488 9750

Էլ. փոստ՝ media.action@bbc.co.uk

Կայք՝ bbcmediaaction.org

Registered office BBC

Media Action
Broadcasting House
Portland Place London
W1A 1AA United
Kingdom

Registered charity number (England & Wales): 1076235